

**ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԸ «ՍԱՄՆԱ ԾՈՒԵՐ» ՀԵՐՈՍԱՎԵՊՈՒՄ
(Կոնֆլիկտ, ագրեսիա, հանդուրժողականություն)**

Թամար Հայրապետյան

Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ՀՀ, Երևան, Չարենցի 15
Էլ. հասցե՝ tamar.hayrapetyan@gmail.com
Հոդվածը ներկայացվել է 11.08.2021, գրախոսվել է 20.10.2021,
ընդունվել է տպագրության 07.03.2022
DOI:10.53548/0320-8117-2022.1-236
ՀՏԴ: 891.981-13 + 398.22

Ներածություն

Մեր հնագույն վիպական ավանդությունը սկսվել է առասպելներով՝ վաղնջական ընդհանուր հավատալիքների ու պաշտամունքի հիման վրա ձևավորելով հայ էթնոսի համախմբումը (կոնսոլիդացիա) և վաղ պետական կազմավորումների ստեղծումը: Հենց այդ ժամանակներից է սերել ցեղային որոշակի մշակույթ կերտող հայոց էթնիկ նախնիների դիցազնացումը, որոնց մասին հյուսված վիպական գրույցների գերակշիռ մասը ձևավորվել է յուրահատուկ կոնֆլիկտի՝ հնդեվրոպական հիմնական առասպելի՝ վիշապի և վիշապամարտիկի ամպրոպային կռվի հիման վրա:

Այսպես, առասպելները տեղայնացել են, պատմավիպականացել, աստիճանաբար վերածվել ազգային վեպի՝ էպոսի՝ համակցվելով Բաղդադի արաբական խալիֆայության (VII-XI դդ.), ինչպես նաև վերջինիս հաջորդած Եգիպտոսի կամ Մսրա մելիքների Էյուբական արաբ տիրակալների (XII-XIII դդ.) դեմ մեր ժողովրդի մղած պայքարին՝ հանուն տեսակի գոյատևման և կենսատարածքի պահպանման:

Սույն աշխատանքը նպատակ ունի անդրադարձ կատարելու «Սասնա ծռեր» հերոսավեպի չորս սերնդի դիցազունների՝ ծննդից մինչև մահ կատարած արարքների և նրանց մղած ազատագրական պայքարի վիպական պատմությանը՝ ըստ համամարդկային ընդհանրական վարքի

¹ Մ. Աբեղյանի իրավամբ «Սասնա ծռեր» հերոսավեպի պատմական հիշողությունների հարակցման, ժամանակագրական-աշխարհագրական փուլայնացման և վերջնաձևավորման ժամանակահատված է համարում VII-XIII դարերը (Աբեղյան 1966, 347-348, 380):

(универсалии)՝ հակամարտական և հաշտարարական դրսևորումների (առասպելական երկվորյակներ, հայրեր և որդիներ, յուրային-օտար, այլ-ազգի-այլակրոն, խաչապաշտ-կռապաշտ տարբերակվածություն, ագրեսիա՝ տեսակով պայմանավորված կանխակալ սերնդագործության, կենսական տարածքի, սննդային ստրատեգիաների, ռեսուրսների և այլնի նկատմամբ)՝ նպատակ ունենալով բացահայտել հաշտեցման հնարավոր եզրեր գտնելու կամ չգտնելու՝ իրավիճակային, ռազմավարական ու մշակութային գործոնները:

Վիշապամարտ

Վիշապասպան հերոսները երեքն են՝ Սանասար, Բաղդասար, մասամբ էլ՝ Մեծ Մհեր: Առաջին երկուսը ջրային ծագմամբ առասպելական երկվորյակներ են², վերջինը Սանասարի որդին է, որի անվան հետ է կապվում վիշապամարտի ընդամենը երկու պատում, մեկը ամբողջական³, մյուսը՝ թերի: Վեպի 47 պատումներից վիշապամարտը հանդիպում է միայն վեցում, որոնց ընդհանրական դիպաշարի համաձայն՝ վիշապը մարդկանց զրկում է ջրից և միայն աղջիկ կուլ տալուց հետո է ջուր բաց թողնում⁴: Մշակութակերտ երկվորյակ եղբայրները մի անձանոթ քաղաքում կռվում են ջրարգել վիշապի դեմ, սպանում նրան, բացում քաղաք եկող աղբյուրի ակը: Նրանցից մեկն ամուսնանում է վիշապի երախից ազատված աղջկա հետ, մյուսն էլ, տարբեր պատումների համաձայն, գնում է Պղնձե, Օձ կամ այլ քաղաքներ, սպանում է թևավոր վիշապին կամ Բաբլաբայան հրեշին, կայծակե թրով քերթում կաշին և ամուսնանում Քառասուն Ճող Ծամի կամ Քառասուն Ծամ Գոհարի հետ⁵: Առասպելական այդ դրվագներում վիշապն ընկալվում է իբրև այլազգի, օտար, իսկ վիշապամարտիկը՝ յուրային:

Դյուցազնավեպում հերոսների ամուսնությունը միշտ ուղեկցվում է կռվով, իսկ վիշապների դեմ մղված կռվի առասպելույթը նախորդում է ամուսնությանը՝ իբրև կանխապայման՝ կա'մ աղջկա կողմից, կա'մ նրա հոր:

² «Սասնա ծռերի» Մոկաց պատումներում երկվորյակ եղբայրներն ունեն գերբնական՝ ջրային ծագում, մինչդեռ Մշո պատումներում՝ բնական, իրական (Սահակյան 1975, 104):

³ Սասունցի Դավիթ 1981, 80-82:

⁴ Սասնա ծռեր 1936, 842-844, Սասնա ծռեր 1951, 557-558:

⁵ Սասնա ծռեր 1936, 987-992:

Սանասար և Բաղդասար

«Սասնա ծռեր» հերոսավեպի հենց առաջին՝ «Սանասար և Բաղդասար» ճյուղը սկսվում է արաբների տիրապետության ժամանակաշրջանը բնութագրող հարկահանությամբ, որն էլ առիթ է դառնում Բաղդադի խալիֆայի և Հայոց Գագիկ թագավորի միջև հակամարտության (կոնֆլիկտ) ծագման: Խալիֆայի հարկահանները պատահաբար տեսնում են Գագիկ թագավորի դուստր Ծովինարին ու, խելքահան եղած նրա հիասքանչ կերպարանքից, շտապում են Բաղդադ՝ հորդորելով խալիֆային ինչ գնով էլ լինի՝ տիրանալ նրան: Խալիֆան Հայոց թագավորից պահանջում է Ծովինարին, որը արական ագրեսիայի դրսևորման ձև է, և չտալու դեպքում սպառնում է պատերազմի դուրս գալ:

Ագրեսիայի և հանդուրժողականության մշակույթը հատուկ է բոլոր հանրույթներին: Այն տեսակի պահպանման համամարդկային դրսևորում է, որի էվոյուցիոն պատմությունը առավել կապակցված է արտահայտվում սննդային, սեռային և կենսատարածքային մարտավարությունների ժամանակ⁶:

«Հանդուրժողականության պրոբլեմի ծագումը կապված է անհատի ազատության հարցի հետ՝ դասակարգերի, ազգային և կրոնական խմբերի պառակտված հասարակության պայմաններում, որոնց շահերը և պատկերացումները մշտապես բախվում են միմյանց՝ լուծում պահանջող կոնֆլիկտների ձևով»⁷: Սոցիոլոգիական տիպաբանությամբ հստակորեն առանձնացվում են հանդուրժողականության երեք ձևեր՝ մշակութային, սոցիալական և կրոնական:

Հանդուրժողականությունը հաճախ հանդես է գալիս որպես համբերատարության յուրահատուկ հոմանիշ⁸, որի քրիստոնեական ըմբռնումը կարծես թե կոչված է մեղմելու անհաշտ սոցիալական հակասությունները և ենթադրում է ներում, չարին բռնությամբ չհակադրվել⁹, բայց հանդուրժողականությունը¹⁰ չի նշանակում սոցիալական անարդարության և

⁶ Добровольская 2005, 13-17, 325-326.

⁷ Բարոյագիտական բառարան 1985, 242:

⁸ The Concise Oxford Russian Dictionary 1998, 951-952.

⁹ Բարոյագիտական բառարան 1985, 242-243:

¹⁰ Նոյեմբերի 16-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հռչակված է որպես հանդուրժողականության միջազգային օր, որը հաստատվել է 1995 թվականին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 28-րդ գլխավոր կոնֆերանսում (N 5.61 բանաձև) և դիտարկում է անհանդուրժողականու-

բռնության նկատմամբ հաշտվողական վերաբերմունքի, խորթ աշխարհայացքի կամ կենսակերպի ընդօրինակում, չի ենթադրում հրաժարում սեփական իրավունքներից և, բնականաբար, հերոսավեպում խաչապաշտ արքան մերժում է իր աղջկան բռնությամբ տիրանալու՝ կռապաշտ խալիֆայի պահանջը.

Թագավորն ասաց. – Ես հայ եմ, դու՛ արաբ, / Ես խաչապաշտ, դու՛ կռապաշտ,

Ի՞նչ բան է, որ ես իմ աղջիկ տամ քեզ: / Ես իմ աղջիկ չեմ խտա քեզ¹¹:

Հայտնի է, որ համաշխարհային պատմության մեջ առաջին անգամ *Բուրդան* է հռչակել հանդուրժողականության սկզբունքը՝ որպես *կրոնական հանդուրժողականություն*, որի համաձայն՝ ոչ ոք չի կարող պարտադրել կրոնական գաղափարներ, որքան էլ դրանք բարձր և ազնիվ թվան:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Մսրամելիքի մահից հետո, երբ Մեծ Միերն իր կնոջը հայտնում է Իսմիլ Խաթունի մոտ տեղափոխվելու և նրան տիրություն անելու մասին, Արմաղանն ընդդիմանում է, ոչ թե այն պատճառով, որ ամուսինն ուրիշ կին է առնում, այլ վրդովվում է, որ նա տաճիկ է.

Տիւ ինչի՞ կ' երթաս. էն տաճիկ ի, դու խայ-քրիստոնայ իս.

Ինչի՞ կ' երթաս էնու խետ կլի՞ս մեկ ենիս¹²:

Բաղդադի խալիֆայի՝ Ծովինարին կնության առնելու պահանջի մերժմամբ հերոսավեպում հայ-տաճիկ, խաչապաշտ-կռապաշտ էթնիկ-այլակրոն տարբերակվածությունը զարգանալով արագորեն վերածվում է կրոնաազգային անհանդուրժողականության, մանավանդ որ Բաղդադի խալիֆային հարկատու Հայոց արքան փորձում է նվազեցնել բռնություն կիրառող կողմի անարդարացի առավելությունից (իշխող-հարկատու) բխող բացահայտ սոցիալական ագրեսիան, որը պայմանավորված է «շահերի, ռեսուրսների և ուժի միջև իրական տարբերություններով, կարծրատիպերով և անարդարության ընկալումով»¹³:

Զայրացած խալիֆան զորք է ուղարկում Հայաստան՝ զորապետներին հրամայելով ավերել Կապուտկողը և բերել Ծովինարին:

թյան հետևանքով մարդկությանը սպառնացող վտանգներն ու առաջարկում անհանդուրժողականության դեմ պայքարի մեթոդներ ու ծրագրեր:

¹¹ Սասունցի Դավիթ 1981, 4-5:

¹² Սասնա ծռեր 1936, 252:

¹³ Փիրսոն 2007, 103:

Հարկահավաքների՝ Ծովինարին տեսնելու միջադեպով «լատենտ (դեռևս չդրսևորված) կոնֆլիկտը, որը դիտարկելի չէր անգամ կոնֆլիկտի մասնակից կողմերի համար»¹⁴, խալիֆայի պահանջով տեղափոխվում է անձնային և ներհոգեկան (խալիֆա-Ծովինար), իսկ հետո՝ հասարակական և միջազգային (Բաղդադի արաբական խալիֆայություն-Հայոց երկիր) մակարդակներ¹⁵: Իբրև գերիշխող կողմ՝ խալիֆան ունենալու է իրեն ենթակա հայերի շահերը, ինքնության և անգամ բուն գոյության իրավունքը¹⁶:

Եվ հարկադիր ամուսնությամբ երկիրն ասպատակությունից փրկելու վիպական դրվագով Ծովինարը անձնային և ներհոգեկան մակարդակներում որոշում է ենթարկվել բռնություն կիրառող կողմի պահանջին, որպեսզի «բացասական խաղաղության»¹⁷ կողմնորոշումով կանխի «դեստրուկտիվ կոնֆլիկտի»¹⁸ հետևանքը՝ պատերազմը:

Իրականում հանդուրժողականությունը, որպես մարդու իրավունքների հիմնարար համընդհանուր սկզբունք, կամային մեծ ակտ է, որը ենթադրում է բարյացակամություն, հարգանք, խաղաղասիրություն, կարեկցանք, ազատախոհություն, բարի կամք, երկխոսություն և համագործակցության պատրաստակամություն: Սակայն Ծովինարն ընտրում է հանդուրժողականության անհատական ձևը, որի հիմքում սոսկ զոհողությունն է: Լսելով աղջկա վճիռը՝ Հայոց թագավորը համաձայնում է նրան ուղարկել խալիֆայի մոտ: Սակայն Ծովինարը ամուսնական կյանքից հրաժարվելու պայման է դնում՝ պահանջելով, որ խալիֆան մի ամբողջ տարի (տարբեր պատումներում ժամկետները փոփոխվում են) չմոտենա իրեն: Այլակրոն ամուսինը Ծովինարին հասնելու համար համաձայնվում է արքայադստեր առաջադրած պահանջին, կնոջ համար հատուկ դրյակ է կառուցել տալիս՝ հայ քահանայի հետ իր Աստծուն կանչելու, իր խաչը

¹⁴ Sandole 1999, 16-17.

¹⁵ Դենիս Զ.Դ. Սանդոլին մշակել է տարբեր մակարդակներում կոնֆլիկտային գործընթացների տիպաբանությունը, որը բնութագրվում է սկզբնավորվելու, էսկալացիայի, վերահսկվող ընթացքի, դեսկալացիայի և որևէ ձևով դադարելու, օրինակ՝ կարգավորվելու, լուծվելու փուլերով (Սանդոլի 2007, 69):

¹⁶ Սասնա ծռեր 1936, 309:

¹⁷ Սանդոլի 2007, 82:

¹⁸ Կոնֆլիկտի սկզբնապատճառը ակնհայտորեն անձնային է՝ պայմանավորված մարդկային բնույթով և սոցիալական իրավիճակներով կամ կառույցներով, որը Բաղդադի խալիֆայի՝ «հնարավոր դեստրուկտիվ վարքագծից փաստացի դեստրուկտիվ վարքագծի անցնելու գործողություն է» (Ռուփինշտեյն (Ա) 2007, 87-89):

պաշտելու համար, իսկ ինքն էլ շարունակում է իր կուռքերին երկրպագել: Խալիֆայի ժամանակավոր հանդուրժողականությամբ՝ կոնֆլիկտը մտնում է վերահսկվող ընթացքի մեջ:

Իրավացիորեն նկատված է, որ հայկական երկվորյակներն իրենց միջազգային զուգորդների նման տարբերվում են կա՛մ սեռով, կա՛մ զորությամբ, կա՛մ բնավորությամբ:

Սանասարն ու Բաղդասարը թեպետ միասեռ, բայց ուժով և բնավորությամբ հակադիր են, որը պատճառաբանվում է նրանց ծագման տարբերությամբ: Բաղդադ գնալուց առաջ Ծովինարը վերջին անգամ զբոսնում է հայրենի «աղբրների վրա» և ծարավելով խմում է ժայռի միջից հրաշքով բխած Կաթնաղբյուրի ջրից: Սանասարը սերում է մոր խմած մեկ ամբողջական բուռ ջրից, իսկ Բաղդասարը՝ կիսաբռից:

Բաղդադում, երբ Խալիֆան իմանում է Ծովինարի հղիության մասին, որոշում է սպանել նրան: Կանխարգելված կոնֆլիկտը նորից վերաճում է բռնության, բայց Ծովինարի խնդրանքով վճռի կատարումը հետաձգվում է մինչև ծննդաբերություն: Խալիֆան տասը տարի ժամանակ է տալիս, որ մայրը սնուցի ու մեծացնի երեխաներին: Ժամանակը լրանալուն պես, երբ դահիճները գալիս են Ծովինարին գլխատելու, ջրածին եղբայրները մարտնչում են նրանց դեմ, հաղթում խալիֆայի զորքին:

Ծնողների ու երկվորյակների միջև հակասությունը նույնպես բնորոշ է երկվորյակների առասպելներին: Խալիֆան, տեսնելով եղբայրների հզորությունը, համոզվում է նրանց մոր անմեղության մեջ և որոշում առերես հաշտվել նրա հետ:

Խալիֆան կրկին հարձակվում է Հայաստանի վրա, յոթ տարի պատերազմում և տարբեր պատճառներով (նրանց ապօրինի ծննդի կամ պարզապես իր կուռքերին նրանց զոհաբերելու խոստումով) կամենում է սպանել երկվորյակ զավակներին: Աստծո կամոք, Ծովինարը երազի մեջ իմանում է այդ ամենի մասին և, տղաներին Բաղդադից հեռացնելով, կանխում է նրանց զոհաբերությունը:

«Որոշ տեսաբաններ հավատացած են, որ ագրեսիվությունը հիմնարար բնազդ է, որը էվոլյուցիոն ճնշումների ազդեցության տակ գենետիկորեն ծրագրավորվել է մեր մեջ»¹⁹ դրդված բարոյական կանոնները խախտելու մարդկանց անուղղելի հակվածությամբ: Ագրեսիվության վերա-

¹⁹ Ռուբինշտեյն (Ա) 2007, 89:

բերյալ այս տեսակետը (որը համընկնում է խալիֆայի ագրեսիվ վարքագծի հետ, և որի պատճառով եղբայրների կյանքին վտանգ է սպառնում) ակտիվորեն շրջանառում է հատկապես Կ. Լորենցը²⁰:

Ծնողների կամ երկվորյակների միջև ծագած հակասությունը, ի վերջո, միջազգային զուգահեռների պես հանգում է նույնատիպ տրամաբանական հետևության՝ երկվորյակները պատժվում են և արտաքսվում իրենց տնից կամ հայրենիքից, հալածվում հոր կամ հայրացուի զորքերից: Եղբայրները, բազում փորձություններ հաղթահարելով, հասնում են Մուշ, Արզրում, որոնց թագավորներն ու ամիրաները, իմանալով, որ նրանք Բաղդադի խալիֆայի որդիներն են, հրաժարվում են նրանց տեր լինել՝ ասելով. «Հա՛յ, հա՛յ, հա՛յ, մենք էդոնց մեռելներուց կը փախնինք, էդոնց կենդանո՞ւն ուստ կը գանք»²¹:

Եղբայրները հասկանում են, որ պետք է հրաժարվել հայրացուից, գիտակցում են, որ իրենք որբ են²²:

Կոնֆլիկտային վարքը դրսևորվում է նաև երկվորյակների անձնական կյանքում, երբ Դեղձունի՝ Սանասարին ուղղված՝ «Արի ինձի ա՛ռ, արի ինձի տա՛ր» սիրառատ նամակը պատահաբար հայտնվում է Բաղդասարի ձեռքում: Վերջինս վրդովվում է, բանից անտեղյակ եղբոր անկեղծությունը կասկածի տակ դնում, թե ինչու Քաջանց թագավորի աղջիկը նամակում Սանասարին երկու անգամ է բարև ուղարկել, իսկ իրեն՝ մեկ²³:

Թղթի մեջ տեսնելով Դեղձունի պատկերը՝ Բաղդասարը ուշաթափվում է մինչ այդ անձանոթ զգացմունքից²⁴:

Անվստահության հողի վրա նրանց միջև խռովություն է ծագում, և բանը հասնում է ֆիզիկական ընդհարման՝ մենամարտի: Սանասարն առավել ամբողջական է, ողջախոհ, Բաղդասարը՝ թերի, տաքարյուն ու խռովկան: Բաղդասարը «սրտանց կը զարնի», իսկ Սանասարը, որ մի քանի անգամ (որոշ պատումներում՝ յոթ անգամ) ուժեղ է Բաղդասարից, խնայում է եղբորը, «հանաք կ'անի»²⁵: Սանասարի թեթևակի զարկից Բաղդասարը կորցնում է գիտակցությունը, որի գրպանում տեսնելով

²⁰ Lorentz 1974, 5-11.

²¹ Սասունցի Դավիթ 1981, 27:

²² Սասունցի Դավիթ 1981, 28:

²³ Սասունցի Դավիթ 1981, 58:

²⁴ Սասունցի Դավիթ 1981, 56:

²⁵ Սասունցի Դավիթ 1981, 59:

Դեղձունի նկարը՝ եղբայրը հասկանում է ամեն ինչ. «Սանասար նստավ, չուր լուս էլաց»²⁶: Լույսը բացվելուն պես Սանասարը Դեղձունին զիջում է եղբորը: Բայց Բաղդասարը հրաժարվում է՝ խոստովանելով, որ եղբայրն իրենից կտրիճ է, կռվում ինքն է հաղթել, մանավանդ որ Դեղձունն էլ նամակում Սանասարին է «էրկու դիր բարև գրե»²⁷: Կոնֆլիկտն ավարտվում է բախում-հաշտեցումով.

Ես քո պստիկ աղբեր, դու իմ ջոջ աղբեր.

Ինչ որ ասես՝ ես քեզ կը լսեմ²⁸:

Սանասարն ամուսնանում է Դեղձունի հետ, իսկ Բաղդասարը՝ ջրարգել վիշապից ազատված՝ Դեղձունի քոջ հետ:

Երկվորյակ մշակութակերտ եղբայրներն ապաստանում են լեռնոտ մի երկրում, բարակ, բայց հզոր ջրի ակունքի մոտ հիմնում Սասնա բերդն ու քաղաքը և վերադառնալով սպանում են իրենց բռնակալ հայրացուին, ազատում մորը, որը դարձյալ քողարկված կերպով աղերսվում է մի կողմից՝ հերոսավեպի առաջին ճյուղի վիշապասպանության առասպելության, մյուս կողմից՝ «հայրեր և որդիներ» համամարդկային ընդհանրական կոնֆլիկտին. դա ինքնահաստատման և սոցիալիզացիայի մարտավարության տեսանկյունից²⁹ ավարտվում է տղաների հաղթանակով, Սասնա տան հիմնադրմամբ և նոր կարգի հաստատմամբ:

Մեծ Միեր

Երկրորդ ճյուղում հակամարտությունը ծագում է օտար նոր բռնակալի՝ Մարամելիքի և Սանասարի կրտսեր որդու՝ Մեծ Միերի միջև, մանավանդ, երբ Սասունը հարկատու է դառնում Մարամելիքին:

Մեծ Միերը յոթ տարի սասունցիներին պահում է իր որսած կենդանիներով. կոնֆլիկտի սկզբնավորման ընթացքում նա պատռում է Սասուն տանող ճանապարհը փակող ահռելի առյուծի երախը³⁰, սասունցիներին ազատում սովամահությունից՝ լուծելով երթևեկության, առևտրի, սննդային ստրատեգիաների խնդիրը:

²⁶ Սասունցի Դավիթ 1981, 62:

²⁷ Սասունցի Դավիթ 1981, 89:

²⁸ Սասունցի Դավիթ 1981, 89:

²⁹ Бутовская 2004, 159-161.

³⁰ Սասնա ծռեր 1944, 59:

Այդ օրվանից *Առյուծաձև*³¹ Միեր կոչված Սասնա նոր հերոսը սպանում է նաև Խլաթա թագավոր, ջրարգել Ճերմակ դևին և ամուսնանում նրա ամրոցում գերեվարված չնաշխարհիկ արքայադստեր՝ Արմաղանի հետ:

Լսելով Սանասարի մահվան լուրը՝ Մարա Մելիքը նորից «խարջի տակ է դնում» Սասունը: Միերը հրաժարվում է հարկ վճարել Մարա Մելիքին, որն էլ կոնֆլիկտը հասցնում է իրավիճակի սրացման (էսկալացիայի): Մենամարտում Մեծ Միերը հաղթում է Մարա Մելիքին.

Էն ինչ Միե՛րն էր, ուժով էր,

Էն ինչ Մըսրա Մելիքն էր՝ խորամանկ էր, ֆանդով էր³²:

Տեսնելով, որ անհնար է հաղթել Մեծ Միերին՝ Մելիքը հաշտվում է նրա հետ, հրաժարվում հարկերից, «ախպերանում է» Միերի հետ:

Շատ դեպքերում փոխհարաբերությունները, որոնք բնութագրվում են ագրեսիայի բարձր մակարդակով, իրականում կարող են մոտ լինել համագործակցությանը: Մեծ Միերն ու Մարա Մելիքը խաղաղության, փոխադարձ օգնության և անկախության ուխտ են կնքում, իսկ կոնֆլիկտն էլ դադարում է, կարելի է ասել՝ առերևույթ լուծվում.

Մատներ կտրին, արուն արնի խառնեցին,

Պայման դրին, էղան աղբեր:

Մըսրա Մելիք էս բան մաքուր սրտով չ'ասաց.

Էն Միերից վախցավ, կեղծավորցավ³³:

Բայց Մարամելիքի մահից հետո նրա կինը՝ Իսմիլ Խաթունը, մի քաջ զավակ ունենալու մտադրությամբ, Միերին կանչում է իր մոտ, քաղցր խոսքով ու թունդ գինով յոթ տարի արբեցնում է քաջին, կենակցում նրա հետ ու ծնում կրտսեր Մարամելիքին՝ որպես Սասնա գլխավոր հակառակորդ: Պատահաբար լսելով մանուկ Մելիքին ներշնչող Իսմիլ Խաթունի՝ «Մըսրա օջախ կանգնացուցես, հայու օջախ փչացուցես»³⁴ խրատը՝ Միերը վրդովվում է.

–Իսմի՛լ, էդ ի՞նչ խրատ կտաս էդոր,

Էդիկ ձըվից դեռ դուրս չ'էկած

³¹ Հետագա ուսումնասիրողների կարծիքով՝ առյուծաձև մակդիրը Միերին ավելի շատ բնութագրում է որպես տոտեմ՝ առյուծի ձև, կերպարանք ունեցող, քան առյուծ պատառող (Ջաքարյան 2004, 164):

³² Սասունցի Դավիթ 1981, 113:

³³ Սասունցի Դավիթ 1981, 113:

³⁴ Սասունցի Դավիթ 1981, 120:

Հիմնկվելն է դու չարությո՞ւն կը սորվեցուս³⁵:

Հերոսավեպի այս դրվագը խոսում է Դ. Սանդուխի մատնանշած կոնֆլիկտային գործընթացների այն մակարդակի մասին, որը թեև նախասկզբնական է, բայց արդեն գոյություն ունի³⁶:

Գիտակցելով իր սխալը՝ Միերը վերադառնում է Սասուն կնոջ՝ Արմաղանի մոտ: Իմանալով Արմաղանի ուխտի մասին, որ երեխա ունենալու դեպքում երկուսով կփոխհատուցեն մահվամբ, Միերը, հանուն ցեղի շարունակության, գնում է ինքնազոհողության:

Սասունցի Դավիթ

Ծնվում է Դավիթը: Եթե ծնողներն իրենց երդմնազանցությամբ պատճառ են դառնում Դավթի որբության, ապա որդին էլ իր ծննդով՝ ծնողների մահվան: Սա «հայրեր և որդիներ» կոնֆլիկտի ծպտված դրսևորումն է, որի կողմերը հերոսավեպում թեև անմիջականորեն չեն հարաբերվում, բայց մեծապես տուժում են (հմմտ. Սասնա ծռերի անհայր մանկությունը՝ համամարդկային ընդհանրական վարքի տեսանկյունից):

Ծնված պահից որբ Դավթին հորեղբայրները չեն կարողանում խնամել, ուստի սնուցելու համար ուղարկում են Իսմիլ Խաթունի մոտ:

Ջորջ Մերդոկի մատնանշած համամարդկային վարքի շուրջ 70 ընդհանրականների շարքին է պատկանում երեխային կրծքով կերակրելն ու կրծքից աստիճանաբար կտրելը³⁷: Բայց մանուկ Դավիթը պատումների գերակշռող մասում հրաժարվում է խորթ, օտար կնոջ կրծքից սնվելուց: Կրտսեր Մսրա Մելիքը Դավթի համառության մեջ վտանգ է տեսնում՝ կապված Սասնա տան ինքնության, տոհմային շահերի հետ և հանդիմանում է մորը.

– Էդա ազգ հաստակող են, մարե, –

Էնի մեր գլխուն ցա՛վ տ՝ ընի:

Էնի հայ է, մենք արաբ ենք,

Քո ծիծ մի՛ տար էնոր³⁸:

Որբացած Դավթի սնուցման կոնֆլիկտը լուծվում է՝ նրա համար Սասունից բերված յուղ ու մեղրով, իսկ զորացումը՝ Կաթնաղբյուրի ջրով:

³⁵ Սասունցի Դավիթ 1981, 120:

³⁶ Սանդուխ 2007, 69:

³⁷ Кравченко 2003, 31.

³⁸ Սասունցի Դավիթ 1981, 131:

Ընդհանրապես որբությունը ուղեկցում է դյուցազնավեպի բոլոր սերունդներին: Որքան էլ նրանք որբության դաժան հետևանքները փորձում են հաղթահարել բնությունից ժառանգած ֆիզիկական հզոր ուժի և արգասավորող ջրային տարերքի հակազդեցությամբ, այնուամենայնիվ, երեխաներ են, որոնք հայրական սիրո ու հովանավորության կարիք ունեն:

Իջավ Դավիթ, տեսավ՝ հրողբեր հալա քնած:

Նստավ իր տեղ, կանչեց, ասաց.

–Հրողբե՛ր, քո անուշ քնից վե՛ր էլի,

Տո հրողբե՛ր, մեռնե՛մ քեզ, հրողբեր,

Ես տեր չ’ունեմ, դու ինձ արա տերություն³⁹:

Թվում է, թե Սասուն–Մըսրը կոնֆլիկտը գնում է դեպի վերահսկվող ընթացք, սակայն դեֆակլացիան խաթարվում է, քանի որ սկիզբ է դրվում մի նոր հակադրության՝ Դավիթ և կրտսեր Մսրամելիք: Վերջինս Դավթի հոր ապօրինի զավակն է, Դավթի եղբայրն ու երդվյալ թշնամին: Նա մանուկ Դավթին փորձում է կրակով ու ոսկով և ցանկանում է խորամանկորեն սպանել նրան:

Մանկուց Դավիթը չի հանդուրժում բռնությունը և ոչ մի կերպ չի հնազանդվում Մսրամելիքին: Հատկանշական է Մսրամելիքի՝ հողի առջևից չհեռանալը, նրա նետած մկունդը բռնելն ու դեն շարտելը, նրա թրի տակով անցնելուց հրաժարվելը, քարին քսված ճկույթից կրակ թռնելը, որը անձնականից վերաճում է ազգային և սոցիալական սուր կոնֆլիկտի:

Դավիթը սպանում է հարամի դևերին, իր հոր պես լուծում ժողովրդի կենսաապահովման և սննդի խնդիրը, Սասնա ամբարները լցնում գանձերով ու բարիքներով, իսկ իր համար ընդամենը մի ձի է վերցնում: Կաթնաղբյուրի ջրից հզորացած Մեծ Միերի որդի Դավիթն աստիճանաբար ապառառսպելականացվում է, և նրա ձեռք բերած բարիքներն էլ ստանում են ոչ թե տիեզերական, այլ տոհմի համար սոցիալական բարօրության արժեք: Ի տարբերություն Մսրամելիքի, որը նենգ է ու դավադիր, Դավիթն անպատվաբեր է համարում արգելանոցում փակված կենդանիներին որսալը. «Մարդն էլ գերին զարկի»⁴⁰:

Մսրա Մելիքը բռնությամբ Սասունը հարկի տակ է դնում, կին ու աղջիկ գերեվարում, կողոպտում է Մարութա վանքն ու կոտորում միաբանությանը: Նա իր հպատակ երկրներից հավաքած մեծաքանակ զորքով

³⁹ Սասունցի Դավիթ 1981, 188:

⁴⁰ Սասունցի Դավիթ 1981, 185:

պաշարում է Սասունը, որը խմում և ցամաքեցնում է Բաթմանա գետը՝ սասունցիներին մատնելով ծարավի: Մասնավորապես այս վերջին գործողությամբ Մսրա Մելիքը համադրվում է հերոսավեպի առաջին ճյուղի ջրարգել վիշապին:

Քնած տեղը թշնամուն սպանելը Դավիթը համարում է ամոթ ու նախատինք: Թե՛ Մսրամելիքին, թե՛ նրա քնած զորքին Դավիթը սարի գլխից որոտաձայն գոչում է իր հարձակման մասին.

Չ'ասեք Դավիթ գող-գող էկավ,

Գող-գող գընաց⁴¹:

Այնինչ կռվից առաջ Մսրա Մելիքը Դավթին խարդավանքով գցում է հորը, ջրաղացքարով ծածկում, իսկ կռվի ժամանակ, երբ հարվածներ տալու հերթը հասնում է Դավթին, Մելիքը վախից խախտում է մենամարտի պայմանները: Թշնամու դեմ ելնում է Դավիթը՝ Քեռի Թորոսի և նրա 39 որդիների հետ: Զարհուրելի ջարդը կանգ է առնում արաբ ծերունի զինվորի նախաձեռնությամբ, որը գործի է դնում կոնֆլիկտների լուծման ավանդական մեխանիզմը՝ Դավթի հետ խոսակցություն ծավալելով առ այն, որ ժողովուրդները մեղք չունեն, որ իր յոթ որդիներին Մելիքը զոռով է բերել կռիվ, որ պատերազմները թագավորներն են սանձազերծում՝ սեփական շահերից ելնելով.

Պատասխանեց. –Մեզ ի՞նչ մեղք կա.

Մըսրա Մելի՛քն է զոռովեն բռնե բերե.

Մըսրա Մելի՛քն է քո դուշման,

Գնա իր հետ կռիվ արա⁴²:

Սա ժողովրդական դիվանագիտության և վեճերի լուծման սովորության մեթոդներից ամենատարածվածն է, երբ մի շարք հասարակություններում մարդիկ դեռևս շարունակում են օգտագործել գյուղի տարեցների կամ հոգևոր առաջնորդների հեղինակությունը՝ իրենց անձնային, ընտանեկան կամ դրացիական կոնֆլիկտները լուծելու համար: Ք. Բլեքը սոցիալական փոփոխությունների գործընթացները կոչում է «արդիականացում», որոնք վիճարկելի են դարձնում ավանդական մեթոդների օրինականությունն ու լիարժեքությունը⁴³»: Իսկ «ժամանակակից կոնֆլիկտների լուծմամբ զբաղվողները հաճախ ներշնչանք, իսկ երբեմն էլ պրակտիկ

⁴¹ Սասունցի Դավիթ 1981, 230:

⁴² Սասունցի Դավիթ 1981, 231:

⁴³ Black 1966, 21-23.

օժանդակություն են գտնում՝ այս կամ այն հասարակությունում հայտնաբերելով վեճերի լուծման ավանդական մեթոդներ և փորձելով դրանք օգտագործել կողմերի միջև վեճը լուծելու համար»⁴⁴:

Մելիքի մայրն ու քույրը երկու անգամ կանխում են Դավթի հարվածները՝ հիշեցնելով մանուկ ժամանակ նրան խնամելու և զբաղեցնելու մասին: Երրորդ հարվածով Դավիթը հորում թաքնված Մարամելիքին երկու կես է անում, վերջ դնում հակամարտությանը և խաղաղությամբ ազատ է արձակում Մելիքի զորքը՝ նախազգուշացնելով, որ այլևս «հանդարտ մնան»:

Մեկ էլ չ' էլնեք ու գաք վեր Սասնա:

Մեկ էլ որ զենք առնեք մեր դեմ,

Թե որ դուք կովի գաք վեր մեզ՝

Քառսուն գազ խոր հորում ըլնեք,

Թե ջաղացի ջոջ քարի տակ,

Տ 'էնի ձեր դեմ Սասնա Դավիթ,

Տ 'էնի ձեր դեմ Թուր Կեծակին:

.....

Ասին. –Դավիթ իր հոր ուխտ արավ՝

Մըսրա Մելիք սպանեց,

Սասուն ազատեց⁴⁵:

Կոնֆլիկտ-հաղթանակ-սեփական կենսատարածք. ահա հայոց ավանդական մշակույթում հայրենիքի գաղափարի բաղձալի ալգորիթմը:

Դավթի մեջ խտացված են բոլոր հնարավոր համամարդկային կոնֆլիկտները: Դավիթը ցեղը պահպանող, չարին հակադրվող, բարին պաշտող, նենգ եղբայրացուի և հանդուգն որդու հետ հակամարտող, մեղք գործող և կնոջ դավով նահատակվող հերոս է: Անձնական մակարդակում Դավիթը կոնֆլիկտ ունի նաև իր նախկին նշանած Չմշկիկ Սուլթանի հետ, որին լքելով կին է առնում արքայադուստր Խանդութին: Ծնվում է Փոքր Միերը:

Փոքր Միեր

Փոքր Միերը յոթ տարվա բացակայությունից հետո որոշում է գտնել հորը: Ճանապարհին հայր ու որդի առանց իրար ճանաչելու մենամար-

⁴⁴ Ռուբինշտեյն (Բ) 2007, 236:

⁴⁵ Սասունցի Դավիթ 1981, 241-243:

տում են: Դավիթը, Միերի բազկին տեսնելով իր ապարանջանը (բազբանդը), նրան հասկացնում է, որ իր որդին է:

Տղան իրիշկեց վեր իր թևին, / Տեսավ՝ ոսկի բազբանդ կապած է.

Լացեց, հասավ Դավթի ձեռք պագեց, ասաց. / -Իմ հեր դո՞ւն ես, ես քե մեղա⁴⁶:

Բայց չներելով իր հետ մենամարտած որդու հանդգնությունը՝ Դավիթը նրան անիծում է. «Անմա՛հ ըլնես, անժառա՛նգ»⁴⁷, որը մեր հին վեպից՝ «Վիպասանքից» է գալիս, ինչպես Արտավազդի փակվելը Մասիսի մեջ:

Դավիթը գնում է Չմշկիկ Սուլթանի հետ կռվելու, որտեղ և դավադրաբար սպանվում է իր ապօրինի աղջկա թունավոր նետից⁴⁸, որի պատճառը մի կողմից՝ հոր և դստեր սառեցված հարաբերությունների հետևանքն է⁴⁹, մյուս կողմից՝ Չմշկիկ Սուլթանի իգական կոնֆլիկտի վրեժը:

Երբ սպանված Դավթի զենքերը բերում են Սասուն, Միերը դառնագին ողբում է նրանց վրա, որն առավելագույնս արտացոլում է որբության դառնությունը.

Էլաց ու վեր քիթ ու բերնին ընկավ գետին...

Միերի արտասուք գետին արեց խանդակ, գնաց:

Իրեք օր որ թամամավ, Միեր նոր շիտկավ, ասաց.

«Աչքեր, դուք կուրանայիք, տղա-տղա չ՝որբանայիք...»⁵⁰:

Անիծված Փոքր Միերը, այնուամենայնիվ, իր հոր վրեժը չի թողնում գետնին. քաջաբար կռվում և հաղթում է իր հոր թշնամի յոթ թագավորներին, սպանում է Չմշկիկ Սուլթանին, որից հետո բազում քաջագործություններ անելով՝ ամուսնանում է գեղեցկուհի Գոհարի հետ:

Միերը հակամարտության մեջ է աշխարհի և անգամ Աստծո հետ: Նա լուսանցքային գոտում հայտնված հերոս է, որի կողմից սոցիալական փորձի, գիտելիքների, վարքի նորմերի յուրացում տեղի չի ունենում, քանի որ սոցիալիզացիայի գործընթացն սկսվում է մանկուց, ավանդույթ-

⁴⁶ Սասունցի Դավիթ 1981, 285:

⁴⁷ Սասունցի Դավիթ 1981, 285:

⁴⁸ Իմ ցեց իմ անձից է, էդ իմ սերմն էր, որ ինձ սպանեց (Սասունցի Դավիթ 1981, 288):

⁴⁹ Ինքնության և ճանաչման հիմնարար պահանջմունքները չբավարարված մնալու դեպքում ավելի շուտ են դրսևորվում բռնության տեսքով, քան նյութական պահանջմունքները կամ ցանկությունները: Ուշադրության չարժանացած երեխային ծնողի մերժումը, ամենայն հավանականությամբ, կրեթի բռնության պոթթվման (Ռուբինշտեյն 2007, 91):

⁵⁰ Սասունցի Դավիթ 1981, 296:

ների ու սովորույթների ընկալումից և շարունակվում ողջ կյանքի ընթացքում⁵¹, այնինչ Միերը ծնված պահից որբ է, սոցիալական, կենցաղային հմտություններից օտարված, ժամանակի և տարածության մեջ կողմնորոշումը կորցրած: Աստծո զինյալ հրեշտակների դեմ նրա անարդյունավետ կռիվը նույնպես ասվածի վկայությունն է: Հոր անեծքը կատարվում է, հողը զառամում ու թուլանում է Միերի ոտքերի տակ:

Միերը Սասնա տան բոլոր անցավորների համար «էլավ քառսուն պատարագ էտու անել»⁵²: Իր անմահությունից պատուհասված հսկան այցելում է հարազատների շիրիմներին, երեխայի պես ծայն տալով աղերսում մորն ու հորը, որ ուղի ցույց տան իրեն, որովհետև ինքն «անմաս է մնացել Սասնա Ջոջ տնեն»: Ծնողները գերեզմանից խորհուրդ են տալիս Միերին գնալ «Ագռավու քար»⁵³: Եվ անմահ ու անժառանգ Միերը փակվում է Վանա կամ Ագռավու քար կոչված ժայռի մեջ, որով էլ ազդարարվում է առասպելի վախճանաբանական ավարտը.

–Որ աշխարք ավերվի, մեկ էլ շինվի,

Եբոր ցորեն էղավ քանց մասուր մի.

Ու գարին էղավ քանց ընկուզ մի,

Էն ժամանակ հրամանք կա, որ էլնենք էդտեղեն⁵⁴:

Այն, որ Միերի քարայրի դուռը բացվել է կամ ժամանակավորապես նա քարայրից դուրս է եկել տարին մեկ անգամ (Համբարձում, Վարդավառ, Ջատիկ, Ծնունդ կամ Փոքր Ջատիկ), հատկապես այն տոներին, որոնք համապատասխանել են հայոց հին նոր տարվա փոփոխվող օրերին, Ս. Հարությունյանի դիտարկմամբ, «ցույց են տալիս, որ Միերի հիշյալ առասպելը հնում կապված է եղել նոր տարվա ծիսակարգին: Նա քարայրից ըստ երևույթին դուրս է եկել յուրաքանչյուր նոր տարվա սկզբին, երբ նորացած ու թարմացած է եղել տարեվերջին իր քայքայման եզրին հասած հին աշխարհը⁵⁵»:

Փոքր Միերը «հայրեր և որդիներ» համամարդկային կոնֆլիկտի ցայտուն օրինակ է: Երբ դրացի երեխաները Միերին պոռնկորդի են անվանում, նա գնում է հորը որոնելու, բայց նրան տեսնում է մի խորոտ

⁵¹ Кравченко 2003, 120-121.

⁵² Սասունցի Դավիթ 1981, 312:

⁵³ Սասունցի Դավիթ 1981, 313:

⁵⁴ Սասունցի Դավիթ 1981, 315:

⁵⁵ Հարությունյան 2000, 456:

աղջիկ իր ծիու գավակին առած, որի համար Մհերը հանդիմանում է ծերունի Դավթին⁵⁶ և կռվում նրա հետ, ամենայն հավանականությամբ, իր մոր անպատվության վրեժն առնելու համար:

Որդին հոր անեծքով քարի մեջ գտնում է իր մահը (անպտղություն) և, միաժամանակ, քարի մեջ փակվելով՝ անմահանում է՝ հակամարտությունը քողարկելով սոցիալական առավել բարվոք կեցության և արդարության հնարավորություններ որոնելու մեջ:

Աշխարհը, իհարկե, կատարյալ չէ: Բայց Սասնա տան ծռերն էլ են խոտորվում իրենց իսկ Տանը սահմանած կարգ ու կանոնից:

Երդմնագանց են լինում և՛ Դավիթը, և՛ Մեծ Մհերը, և՛ իր կինը: Դավիթը, լսելով Խանդութի գեղեցկությունը գովաբանող աշուղներին, դրժում է Չմշկիկ Սուլթանին տված ամուսնության երդումը և գնում Խանդութի մոտ՝ միաժամանակ խոստանալով Կապուտկողի իշխանի աղջկան էլ առնել:

Մեծ Մհերը, ընդառաջ գնալով Իսմիլ Խաթունի հրավերին, երկար ժամանակով հեռանում է իր կնոջից ու երկրից և անգամ ամուսնանում Իսմիլի հետ: «Երդումակոտոր լինելու» պատճառով Դավթին սպանում է օտար կնոջից սերված իր աղջիկը: Դավթի անեծքով իր իսկ որդին դառնում է անմահ ու անժառանգ:

Դյուցազնավեպի հերոսները, որքան էլ ցասումով են լցված թշնամիների դեմ, ամենևին էլ դաժան ու անհոգի չեն ուրիշ ժողովուրդների նկատմամբ: Բայց Փոքր Մհերը թշնամու քաղաքների վրա հարձակվելիս հիմնահատակ ավերում է ամեն ինչ, օրինակ՝ Խլաթում կտրում է քաղաքի վերջին ծուխը, սպանում վերջին պառավին և անգամ վերջին կատվին:

Նա չարաչար պատժելով՝ սպանում է որսն իր ձեռքից խլած վեց քեռիներին⁵⁷, ուխտադրժորեն սպանում է շահադիտական նպատակներով իրեն օգնության ձեռք մեկնած խորամանկ պառավին ու նրա տգեղ ու տձև աղջկան⁵⁸՝ կորցնելով կապը դյուցազնական սերունդների ավանդույթների հետ:

Փոքր Մհերը հստակորեն ձևավորված որոշակի արժեքային պահանջմունքների ու կողմնորոշումների կրող չէ: Նա մեկուսացած է, և ինչպես մասնագիտական գրականության մեջ է նշվում, նման հերոսները

⁵⁶ Սասունցի Դավիթ 1981, 283:

⁵⁷ Սասնա ծռեր 1951, 299-300:

⁵⁸ Սասնա ծռեր 1951, 217-219:

չեն կարողանում բնակության միջավայրը հարմարեցնել իրենց, փոփոխության ենթարկել սեփական պահանջմունքներին համապատասխան, ստեղծել գոյության արհեստական պայմանների պաշտպանական շերտ⁵⁹:

Դյուցազունների ծոությունն ու կոպիտ խաղը

««Սասնա ծռերի» ծոության թեման սերտորեն կապված է մանկության հետ. մանկական միամտությունը կարծես դառնում է նրանց բնավորության գլխավոր գծերից մեկը»⁶⁰, որը դարձյալ կոնֆլիկտի պատճառ է դառնում:

Նրանք արագ են մեծանում. եթե ուրիշները տարով են մեծանում, ծռերը՝ ամսով ու ժամով: Նրանց մանկական խաղերն ու չարությունները կոպտության պատճառով մարգինալ բնույթ են կրում: «Քաղքի մեծերը», Բաղդադի ավագանին, պատուհասված «լաճերի հերերն ու մերերը» գանգատ են գնում Խալիֆայի, Մսրամելիքի կամ Ձենով Հովանի մոտ.

–Էն շան որբ մեր ճժեր խեղեց:

Մենք տ'էրթանք, Դավթին սպանենք,

Դավթի ինչի՞ մեր տղաներու վիզ ծռեց⁶¹:

Ծռերին ստիպված փակում են տանը և քնած թողնում, դարձնում են գառնարած կամ հորթարած, որպեսզի հնարավորինս մեկուսացնեն շրջապատից.

Ճժեր էղան յոթ տարեկան:

Օր մի կը խաղային հետ էն մեկել ճժերուն.

Սիլա մի զարկեց Սանասար վազրի լաճուն,

Վիզըն ծռվեց, մնաց ծուռ:

Վազիր գնաց Խալիֆայի մոտ գանգատ,

Ասաց. –Էս ի՞նչ Աստծո պատիժ է.

Մեզ ճիժ չթողին սալամաթ:

Խալիֆան ասաց. –Իրավունք ունին.

Ես գիտեմ՝ էնոնք որ ջոջանան,

Տի կախվեն իմ մորուսից:

Կա՛ց, էնոնց համար բան մի կ'անենք⁶²:

Մահմեդական Արևելքում մորուքը ավանդաբար եղել է իշխանության խորհրդանիշ, իսկ մորուքի ամբողջականությունը խախտելը՝ ձգելը,

⁵⁹ Кравченко 2003, 19-22.

⁶⁰ Եղիազարյան 1999, 168:

⁶¹ Սասունցի Դավթի 1981, 158:

⁶² Սասունցի Դավթի 1981, 13:

պոկելը, հավասարազոր է ամենամեծ անարգանքի⁶³, ինչը տեսնում ենք նաև *Մուհամմադ մարգարեի* կյանքի տարբեր դրվագների մասին պատմող հադիսներում: Խալիֆան արդեն իսկ վախեցել էր երկվորյակների խոշոր չափերից, կոպիտ խաղից և իր մորուքից կախվելու հավանականությունից, ինչից երկյուղում է: Ֆիզիկական հզորությամբ օժտված քաջագունները, այնուամենայնիվ, երեխաներ են, բայց ստիպված են հրաժարվել խաղալու բնական ցանկությունից, քանի որ նրանց խաղը չի ստացվում, ինչպես Դավիթ՝ ծառով «դռնգոգա» խաղալու դրվագը, երբ հսկա բարդու կատարը իջեցնում է, տարեկիցներին շարում վրան, որ «ձի քշեն», իսկ երբ ձեռքը հոգնում է, տղաները ականջ չեն դնում և չեն իջնում ճյուղերից, որի պատճառով ծովում են նրանց վզերը, դուրս են ընկնում ոտքերն ու ձեռքերը կամ էլ անդամնալիորեն պատուհասվում են.

Էդունց հերեր էկան, լցվան Մելիքի դուռ,

Բողոք բարձրացուցին, ասին.

–Թագավոր, էդ ծուռ Դավիթ հեռացուր.

Թէ չէ՝ կը քոչենք, կ’ էրթանք էս երկրեն⁶⁴:

Մյուս կողմից էլ մանկություն չունեցող Սասնա ծռերը դժվարությամբ են հրաժարվում մանկությունից, որը, շեղվող, արտասովոր երևույթ լինելով, ծռություն է հաղորդում նրանց արարքներին: Բայց այդ ծռությունը հավասարազոր է պատվախնդրությանը. դա բնութագրական է հատկապես «Ազնանց ջրնսի» համար: Դավիթը գերադասում է մենակ կռվել և պատվով մեռնել, քան հանդուրժել, որ թշնամին հատի Սասունի սահմանները կամ իր հայրենիքը «խարջի» տակ դնի. «Ծուռ է կոչվում, ուրեմն, սասունցին ընդհանրապես և սասունցի հերոսը մասնավորապես նրա համար, որ իր անձնական իրավունքն է պաշտպանում և ոչ թե ստրկորեն տանում հարստահարության լուծը: Բայց այդպիսի ծուռը միանգամայն և քաջի, կտրիճի նշանակություն է ստանում»⁶⁵:

«Ազնանց» կամ «Ֆերզի» (իմա՝ դյուցազուն կամ հրեղեն) տոհմի Սասնա ծռերը հաղթանդամ են, ուժեղ, բայց երեխայի պես պարզասիրտ ու անօգնական:

Իբրև անցյալի մի ազնիվ, գերբնական և մարմնական բարեմասնություններով ու չափակցությամբ օժտված սերունդ՝ այդ հսկաները

⁶³ Esposito 2004, 200, Аль-Бухари 2003.

⁶⁴ Սասունցի Դավիթ 1981, 133:

⁶⁵ Աբեդյան 1966, 449:

ամեն ինչ ուժով են անում, սովորական մարդիկ՝ խելքով: Բաղդասարը քառասուն լիտր գարով լի տոպրակը ձեռքով է բարձրացնում, որ ձիուն կերակրի, իսկ մարդը բաց է անում տոպրակի բերանը, որ ձին, գարին տեսնելով, մոուֆը մտցնի տոպրակի մեջ. ավելին, մարդը տոպրակի պարանը ձգում է ձիու ականջների հետևը, ձին, գլուխը բարձրացնելով, տոպրակն էլ հետն է բարձրացնում: Բաղդասարը զարմանում է, որ ինչ ինքը զոռով էր բարձրացնում, մարդը խելքով բարձրացրեց: Մայրը բացատրում է հսկայի և մարդու տարբերությունը.

Ասավ.-Վորդի', դուք ջրից եք բահամ եկե,

Դուք ֆերզի ազգ եք, ձեր բանը զոռով ա.

Ըդոնք խելքով կ' ապրին⁶⁶:

«Միերն իր բռի, կոպիտ, բուն մարմնական ուժով է ապրում, մինչդեռ նրա մոտ՝ Տոսպան քարայրը մտնող հովիվը (տոպրակը բարձրացնելու պատմությունը կա նաև Միերի ու մի հովվի վրա) «աշխարհը խելքով է ուտում»: Միերը, սակայն, հին, շատ հին սերնդի ներկայացուցիչ է, նրա ուժը թաղված է գետնի մեջ, նա փակված է այրի մեջ. նրան փոխանակել է մարդկանց նոր սերունդը, որ մարմնով թույլ է, բայց մտքի ուժով է գործում և ապրում: Հսկան ուժեղ է, մարդը՝ հանճարեղ»⁶⁷:

Եզրակացություններ

Արաբների հարկային ծանր քաղաքականության (Բաղդադի խալիֆա, Մսրա Մելիք) վիպական պատմությունը «Սասնա ծռեր» հերոսավեպի կենտրոնական թեմաներից մեկն է, ուստի դյուցազնաշրջանի ամեն մի սերունդ ավելի ու ավելի մեծ սխրագործություններ է կատարում՝ ձգտելով հանգուցալուծել ժամանակաշրջանի համար խիստ բնորոշ կամայական հարկահանության կոնֆլիկտը՝ համամարդկային ընդհանրական վարքի՝ հակամարտության և հաշտեցման մշակույթի տեսանկյունից:

Իշխող - հարկատու «հիերարխիայից» բխող բացահայտ սոցիալական ագրեսիան, շահերի, ռեսուրսների և ուժի միջև իրական տարբերություններն ու անարդարությունը հանգեցնում են էթնիկ - այլակրոն տարբերակվածությամբ կրոնաազգային անհանդուրժողականության, Մըսր - Սասուն հարաբերությունների ճգնաժամի:

⁶⁶ Սասնա ծռեր 1951, 241:

⁶⁷ Աբեդյան 1966, 405-406:

Սասնա հերոսները, լինելով իրենց տոհմի նախնիներ և Հայոց տիեզերքի կերտողներ, թեև պատերազմ չեն հրահրում, արյուն հեղել չեն ուզում, բայց ստիպված են կռվել հանուն տեսակի գոյատևման և կենսատարածքի պահպանման:

Վեպի՝ ժառանգական հերթագայությամբ բաղադրված չորս սերունդները, անկախ նախնիների հրաշալի ծագումից, աստիճանաբար ինչ-որ չափով ապասրբայնացվում են՝ ձեռք բերելով որոշակի մարդկային կերպարանք ու հատկանիշներ, սակայն Փոքր Միերը, ընդհակառակը, դառնում է դյուցազնավեպի ամենաառասպելականացված և ծիսականացված հերոսը:

«Փոքր Միեր» ճյուղով վիպական սերնդափոխությունն ընդհատվում է, հերոսավեպը վերջանում է, բայց Սասնա վերջին դյուցազունը շարունակում է մնալ հակամարտության մեջ՝ թե՛ իր, թե՛ աշխարհի հետ, քանի դեռ արդարություն ու բարօրություն խորհրդանշող հացահատիկների՝ ֆիզիկական չափերի աննախադեպ մեծացումը շարունակում է մնալ ժայռից դուրս գալու առասպելաբանական նախապայման՝ հին աշխարհի կործանման ու նորի վերաշինման համար, որը դարձյալ կոնֆլիկտ է՝ բանականի (ռացիոնալի) և ոչ բանականի (իրացիոնալի) կարգավորման միջև:

Հասարակությունը բանական է այն չափով, ինչ չափով նա օգտագործում է մարդկության մշակութային գենոֆոնդի արժեքային ձեռքբերումները, որոնք ինչպես մեր, այնպես էլ նմանատիպ այլ հերոսավեպերի պարագայում հարուցում են կոմունիկատիվ ձևերի ու եղանակների մշակութային յուրացման որոշակի հաղորդակցային և նորմատիվ (բարոյականություն և իրավունք) խնդիրներ:

Գրականություն

- Աբեղյան Մ. 1966, Երկեր, հ. Ա, հատորի խմբագրությունը, նախաբանը և ծանոթագրությունները Ա. Ղանալանյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 571 էջ:
- Բարոյագիտական բառարան 1985, թարգմ. Ռ.Գ. Ավոյանի, խմբ. Ի.Ս. Կոնի, «Հայաստան», 456 էջ:
- Եղիազարյան Ա. 1999, «Սասնա ծռեր» էպոսի պոետիկան, պատասխանատու խմբ., ք.գ.դ. Հ.Գ. Բախչինյան, Երևան, «Գիտություն», 281 էջ:
- Զաքարյան Հ.Լ. 2004, Ժողովրդական ստուգաբանություններն ու ստուգաբանական ավանդությունները «Սասնա ծռերում», Հայկական «Սասնա ծռեր» էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը,

- Միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ծաղկաձոր, 4-6 նոյեմբերի, Երևան, էջ 161-166:
- Հարությունյան Ս. 2000, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, Համազգայինի Վահե Սէթեան տպ., 527 էջ:
- Ռուբինշտեյն Ռ.Ե. (Ա) 2007, Սկզբնապատճառները, Կոնֆլիկտ (խմբ.' Ս. Չելդելին, Դ. Դրաքման, Լ. Ֆասթ), Երևան, «Ձանգակ-97», Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, էջ 87-102:
- Ռուբինշտեյն Ռ.Ե. (Բ) 2007, Ինստիտուտները, Կոնֆլիկտ (խմբ.' Ս. Չելդելին, Դ. Դրաքման, Լ. Ֆասթ), Երևան, «Ձանգակ-97», Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, էջ 229-252:
- Սահակյան Ա. 1975, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 190 էջ:
- Սանդուխտի Դենիս Զ.Դ. 2007, Տիպաբանությունը, Կոնֆլիկտ (խմբ.' Ս. Չելդելին, Դ. Դրաքման, Լ. Ֆասթ), Երևան, «Ձանգակ-97», Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, էջ 68-86:
- Սասնա ծռեր 1936, հ. Ա, ընդհանուր խմբ.' պրոֆ. դր. Մանուկ Աբեղյանի, Երևան, «Հայպետհրատ», 1128 էջ:
- Սասնա ծռեր 1944, հ. Բ, մաս Ա, խմբագրեց ակադեմիկոս Մանուկ Աբեղյան, Երևան, «Հայպետհրատ», 405 էջ:
- Սասնա ծռեր 1951, հ. Բ, մաս Բ, Ընդհանուր խմբագրությամբ ակադեմիկոս Մանուկ Աբեղյանի, Երևան, «Հայպետհրատ», 1004 էջ:
- Սասունցի Դավիթ 1981, Հայ ժողովրդական հերոսավեպ, Երևան, «Լույս», 367 էջ:
- Փիրսոն դե Էսթրիե Թ. 2007, Դինամիկան, Կոնֆլիկտ (խմբ.' Ս. Չելդելին, Դ. Դրաքման, Լ. Ֆասթ), Երևան, «Ձանգակ-97», Հայաստանում ԱՄՆ դեսպանություն, էջ 103-128:
- Аль-Бухари М. Сахих аль-Бухари 2003 [Свод хадисов имама аль-Бухари] (Мухтасар полный вариант), пер. с араб. В.А. Нирша, N 5892, Москва, «Умма», 960 с.
- Бутовская М.Л. 2004, Тайны пола, мужчина и женщина в зеркале эволюции, Фрязино, «БЕК 2», 368 с.
- Добровольская М.В. 2005, Человек и его пища, Москва, «Научный мир», 368 с.
- Кравченко А.И. 2003, Культурология, Москва, Академический проект, «Трикта», 496 с.
- Black C.E. 1966, The Dynamics of Modernization: A Study In Comparative History. Princeton, NJ, Princeton University Press, 210 p.
- Esposito J.L. 2004, The Islamic World: Past and Present, Oxford, University Press, 744 p.
- Iorentz K. 1974, On Agression. New York, Harcourt Brace, 306 p.
- Sandole D.J.D. 1999, Capturing the Complexity of Conflict: Dealing with Violent Ethnic Conflicts of the Post-Cold War Era, London, Pinter, 320 p.

The Concise Oxford Russian Dictionary 1998, Revised Edition, Oxford University Press, p. 951-952.

**ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ
«ՍԱՍՆԱ ԾՐԵՐ» ՀԵՐՈՍԱՎԵՊՈՒՄ
(կոնֆլիկտ, ագրեսիա, հանդուրժողականություն)**

Թամար Հայրապետյան

Ամփոփում

«Սասնա ծռեր» հերոսավեպը բավական մանրամասն ուսումնասիրվել է բանագիտության և առասպելաբանության դիտանկյունից:

Էպոսի չորս ճյուղերի սերնդակցությամբ կապված վիպական հերոսներին կոնֆլիկտային իրավիճակներում դիտարկելը (երկվորյակներ, ծնողներ և զավակներ ընդհանրական հակամարտություն, յուրային-օտար էթնիկ տարբերակվածություն՝ կրոնական հատկանիշի ընդգծմամբ, հակառակորդի կողմից կանխամտածված սերնդագործություն, ագրեսիա՝ տեսակի, կենսական տարածքի ու ռեսուրսների, սննդային ստրատեգիաների նկատմամբ և այլն) հնարավորություն է ընձեռում բացահայտել հերոսների՝ հակամարտությունից դուրս գալու և հաշտեցման հնարավոր եզրեր գտնելու կամ չգտնելու՝ իրավիճակային, ռազմավարական ու մշակութային գործոնները:

Բանալի բառեր՝ բանահյուսություն, առասպել, հերոսավեպ, կոնֆլիկտ, ագրեսիա, հաշտարարություն, մշակույթ:

**КУЛЬТУРА КОНФЛИКТА И ПРИМИРЕНИЯ В ГЕРОИЧЕСКОМ ЭПОСЕ
«САСУНСКИЕ УДАЛЬЦЫ»
(конфликт, агрессия, толерантность)**

Тамар Айрапетян

Резюме

Героический эпос «Сасунские удальцы» был довольно детально исследован с точки зрения филологии и мифологии. Характеристика эпических героев четырех ветвей эпоса, связь между их поколениями, поведение в конфликтных ситуациях (близнецы, родители и дети – общий конфликт, свой – чужой, этническая дифференциация с точки зрения религии, преднамеренное истребление поколений противником, агрессия

в отношении жизненного пространства и ресурсов и т.д.), толерантность выявляет ситуативные, стратегические и культурные факторы, при помощи которых герои находят выход из конфликтных ситуаций.

Ключевые слова – фольклор, миф, эпос, конфликт, агрессия, примирение, культура.

**THE CULTURE OF CONFLICT AND RECONCILIATION IN THE EPIC
«DAREDEVILS OF SASOUN»
(Conflict, Aggression, Tolerance)**

Tamar Hayrapetyan

Abstract

The Armenian heroic epic «Daredevils of Sasoun» has undergone rather detailed examination from the point of view of philology and mythology. The aim of this article is to study the heroes of the epic from the four branches and their generations in conflict situations (twins, parents and children – a common conflict, ethnic differentiation, with emphasis on religion and generations, aggression against each other, living space and resources, etc.). An attempt has been made to identify the situational, strategic and cultural factors of the heroes' attempts for finding a way out from conflict and its reconciliation.

Key words – folklore, myth, heroic epic, conflict, aggression, reconciliation, culture.